Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2021 թ.
հունվարի 14-ի N 21-Ա
որոշման

«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ ԺԱՄԱՆԱԾ ՄԱՐԴԿԱՆՑ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Աջակցել Լեռնային Ղարաբաղից Հայաստան ժամանած մարդկանց սոցիալական և առողջապահական կարիքներին, սոցիալական աջակցություն տրամադրել սննդի և հիգիենիկ ծանրոցների տրամադրման միջոցով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ օրենքներով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով:
3.	Բարեգործը	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը (ԳՄՀԸ), Հայաստան, Երևան, Հանրապետության փող., 59 շենք, 8-րդ հարկ, հեռ. +374-10-510060
4.	Ծրագրի կատարողը	Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Երևան, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ քաղ. Երևան և ՀՀ մարզեր, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն՝ 27,443,745 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	2,365 Լեռնային Ղարաբաղից Հայաստան ժամանած մարդիկ՝ մեծամասամբ կանայք, երեխաներ և տարեցներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	11.01.2021 թ. – 07.02.2021 թ.
9.	Միջոցացառումների նկարագրությունը և ժամ-կետները, անհրաժեշտ	Ծրագրի շրջանակներում ծավալվող գործողությունները լինելու են հետևյալ ուղղություններով՝ Հումանիտար աջակցության տրամադրում Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն ժամանած, սոցիալապես անապահով անձանց, ինչը ներառում է սննդային ապրանքների և հիգիենիկ

	ֆինանսական միջոցների ծավալը	պարագաների ձեռքբերում, տեսակավորում, փաթեթավորում, բեռնափոխադրում և բաշխում, ինչպես նաև պահեստի վարձակալություն: Ժամանակահատված՝ 11 հունվարի 2021 թ. – 7 փետրվարի 2021 թ. Բյուջե՝ 26,120,325 դրամ Ծրագրի կազմակերպական և պահպանման ծախսերը՝ 1,323,420 դրամ, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ 620,000 դրամ, ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ և ծրագրի իրականացման համար անհրաժեշտ գրենական պիտույքների ձեռքբերում, կոմունալ վճարումներ, հեռահաղորդակցության ծառայությունների վճարումներ, սարքավորումների սպասարկում՝ 703,420 դրամ:
10.	Ձեռք բերվող /ներմուծվող/ ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալներն ու նախատեսվող գինը:	Ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը՝ 1. Մննդային ապրանքների ձեռքբերում, որի գումարը կազմում է 19,168,325 դրամ: 2. Հիգիենիկ պարագաների ձեռքբերում, որի գումարը կազմում է 5,472,000 դրամ 3. Բեռնափոխադրման ծառայությունների ձեռքբերում, որի գումարը կազմում է 1,030,000 դրամ: 4. Պահեստի վարձակալության ծառայություն, որի գումարը կազմում է 450,000 դրամ 5. Գրենական պիտույքների ձեռքբերում՝ որի գումարը կազմում է 200,000դրամ 6. Կոմունալ վճարումներ, հեռահաղորդակցության ծառայությունների վճարումներ, սարքավորումների սպասարկում, որի գումարը կազմում է 503,420 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր	Ծրագրի կազմակերպական և պահպանման ծախսերը՝ 1,323,420 դրամ, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ 620,000 դրամ, ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ և ծրագրի իրականացման համար անհրաժեշտ գրենական պիտույքների ձեռքբերում՝ 200,000 դրամ, կոմունալ վճարումներ, հեռահաղորդակցության ծառայությունների վճարումներ, սարքավորումների սպասարկում՝ 503,420 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավար-ման, տեղական ինքնա-կառավարման մարմինների, այլ կազմա-կերպությունների հետ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և տեղական ինքնակառավարման մարմինների հետ սերտ համագործակցությամբ:

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը:	Հայկական Կարմիր խաչի ընկերությունը հաշվետվություններ կտրամադրի «Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությանը (ԳՄՀԸ)», ինչպես նաև կատարվելու է պարբերական մոնիթորինգ: Հայկական Կարմիր խաչի ընկերության Գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է գործունեության անմիջական վերահսկում: Ըստ սահմանված կարգի՝ հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ